

## ՀԱՆԴԵՍ

**ՊԱՐԳԵՒԱԾՈՒԹԵԱՆ**

# ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԻՆ

ՕԳՈՍՏՈՍ 1863

**Աղջի մը մտաւոր և նիւթական յառաջադիմութիւնը ջանիկք և աշխատանգը կը լլայ . մարդկութեան մարմնոյ աճումը բնութեան ճգովն է որ առաջ կուգայ . իսկ մտաց և սրտի հոգեկան կարողութիւնը որչափ ալ բնական ձրիկք զարդարեալ ըլլայ , եթէ փոյթն և քիրտն չոռողանեն այն ձիրքերն՝ կը թառամին և անպտուղ կը մնան . երանի թէ վնասակար իսկ չըլլան անձանց և այլոց միանգամայն :**

Տղայք ակնկալութիւնք են մարդկութեան , հիմն ապագային , յորոյ վրայ պիտի շինուի և կատարելագործուի մարդս : Արդի բոլոր քաղաքականացեալ ազգեր աղէկ ըմբռնած են այս ճշմարտութեանս կարեորութիւնն , անոր համար ալ է որ ամէն տեղ վարժարանաց վրայ եղած մտադրութիւնը՝ մասնական պաշտօնարանի յանձնուած է : Աղէկ հասկըցած են որ ճշմարիտ քաղաքականութիւնը ուղիղ դաստիարակութեան վրայ հիմնեալ է , և աղէկ դաստիարակեալ տղան է որ օգտակար քաղաքացի կը կազմէ : Մեք Հայքս ալ , այս կէս դարուս ընթացքին մէջ , քիչ շատ փորձով տեսեր եմք և կը տեսնեմք , մասնկութեան հասակին վրայ մտադրութեան ամենակարեւոր պէտքն և օգուտն , և մեծաւ յուսով ապագային հորիզոնին վրայ աղջին մտաւոր վերակենդանութիւնը կը փնտուենք . որչափ պարտք են որ այս գլխաւոր մասիս մէջ ուրիշ կրթեալ ազգերէն ետ չմնանք , և մասնաւոր մտադրութիւննիս գրաւէ այդ տկար հասակն , որուն յառաջադիմութիւնը և կամ յետամնայութիւնը աղդին ապագային վճիռն կը կտրեն :

Այս խորհրդածութիւնքս առանձին կերպով մը նորոգուեցան մեր մտացը մէջ այս տարի ալ . երբ մեր սիրելի աշակերտաց ուսումնական տարին լմբննալով աշուշնիս իրենց հետ ետ մը դարձուցինք , և անցեալ մեր կտրած տարուան մը ճամբան սկսանք քննել , թէ ինչ շահեցանք , և թէ ինչ յոյս կու տայ մեր քըննութիւնն ապագային վրայ . և ըստ այնմ քաջալերեցան մանկոնք իրենց ընդունած պսակներովն , քաջալերեցան և վարժապետք տեսնելով իրենց աշակերտաց պսակուիլն , և միանդամայն առաջադրելն որ ամենեքին իրենց ասպարիզին մէջ յաջորդ տարին աւելի ևս արդեամք մօտենան պսակն ընդունելու կէտին :

Մեր այս ընտանեկան ուրախութիւնը աւելի հանդիսաւոր եղաւ նախադաշտեամբ Օսմանեան պետութեան Դեսպան վաեմափայլ ձէմիլ փաշային որ հաճացաւ պատուել զմեզ, ընկերացեալ իւր առաջին քարտուղար ազնուազարմ Յարութիւն Գարեգին լիքէնտիէ Տատեան, Ֆահրի Պէյ Երկրորդ քարտուղարէ, և Բարիզու Օսմանեան վարժարանին տեսուչ Ալի Պէյ գնդապետէ: Գարձեալ այս տարի Բարիզու գոտնուող բազմաթիւ ազգայինք, պարոնայք և խաթունայք, յորոց նշանաւորն են Վաեմափայլ Պօղոս Պէյ Տիւզ, Ազնուազարմ Ցիկին Մարիսամ Ցիւզ-Տամատ, Յակոբ լիքէնտի, Քէօչէեանք, Շաշեան, Գըլճեան և այլն, որոց ներկայութիւնն բոլորովին ազգային երեսյթ մը տուաւ աս տարուան հանդիսին: Գաղղիացի նշանաւոր և բարեկամ անձինքներէ ներկայ էին Պ. Կրանէ՝ հասարակաց կըրթութեան պաշտօնարանին զիսաւորաց մէկն. արեելագէտքն Ապէ-Պարմէս սորպոնեան վարժապետն, Պիանքի, Լանկուա, Բրուտոմ, վարժարանիս մերձաքնակ աղնուականներէն ոմանք, վարժարանիս արտաքին վարժապետքն, և այլն:

Հանդէսն սկսաւ զինուորական երաժշտութեամբ, և յաշակերտաց երգուածազգային և օտար եղանակօք. ազգայիններն շարագրեալ էին վարժարանիս և տէրութեան երաժշտութեան դպրոցին աշակերտ ՚ի Պ. Յակոբայ թովմասեան որ շատ ընդունելութիւն գտան ՚ի հանդիսականաց: Յետ որոց նախադահն բացեալ հրատարակելով վժողովն, վարժարանիս Փ. տեսուչն ճառ մը խօսեցաւ ցուցանելով որ այժմեան մանկութիւնն ապագայ ազգն ըլլալով՝ արժանի են որ մեծամեծ մարդկանց մոռագրութիւնն իրենց գրաւեն. վասն զի իրենց ներկայ կեանքն առհաւատչեայ մըն է ապագային. և շնորհակալ եղաւ նախազահին, որ իր ներկայութեամբն վեհափառ Սուլդանին կամքը կը կատարէր, որ փոյթ և խնամունի իր հպատակ ազգաց մտաւոր և նիւթական յառաջադիմութեանը. առ որ նոյն խոկ վսեմափայլ գեսպանն իր լուսաւորեալ քաղաքականութեամբն և բարեսէր վութովն կ'աշխասափ նոյն վախճանին, մասնաւոր խնամք ցուցընելով Գաղղիոյ մէջ գտնուած Օսմանեան հպատակաց, որ ուսման պատճառաւ իրենց երկրէն հեռու կը գեգերին: Շնորհակալ եղաւ ազգայնոց ալ որ իրենց ներկայութեամբն մեր հեռաւոր հայրենիքը կը յիշեցընէին, և տղոց իրենց ծնողացը բացակայութիւնը կը լեցընէին: Շնորհակալ եղաւ գաղղիացի հանդիսականաց, որոնց և աշխարհիս մայրաքազարին մէջ կը վայելէ վարժարանս զբարերար ասպնջականութիւն, որոյ հաւատափին էր Գաղղիոյ օգոստափառ կայսեր մեծադիր իւղաներկ կենդանագիրն, նուիրեալ ՚ի նմանէ առ միաբանութիւնն Միսիթարեանց որ ՚ի վենետիկ, և նոյն օրն ամպհովանիի տակ դրուած էր հանդիսին մեծ դահլիճը: Ապա նիւթ առնելով Գաղղիոյ նորընտիր հասարակաց կրթութեան պաշտօնէին կարգադրութիւնը որ փիլիսոփայութեան դասախոսութիւնը կը վերանորոգէր ՚ի վարժարանս պետութեան, ազգու բանիւք կը ցուցընէր թէ ճշմարիտ և ուղիղ փիլիսոփայութիւնն ոչ երբէք զմարդ անաստուած կ'ընէ. և օրինակաւ կը յիշէր որ ՚ի մեծամեծ փիլիսոփայից ոչ ոք անաստուած եղեր է. դարձեալ թէ փիլիսոփայութիւնն պաշտպան և ապաէն է ընտանեկան, քաղաքական և կրօնական կենաց մարդկութեան. և ըստ բանի լորտ Պայրընի անգղիացի գրչի, փիլիսոփայութիւնը սուր է Երկայրի, Երկնային կրակի մէջ ջուր տրուած, և Երկինք զայն տուեր է մարդուս յօդուա և ՚ի վնաս. որով եթէ մենք զմեզ կընանք վիրաւու-

րել և եթէ կրնանք զերկինս ստանալ։ Վերջ տուաւ իր խօսիցը, յիշելով հասարակաց կրթութեան պաշտօնէին շրջաբերականին խօսքը, թէ « Փիլիսոփայութեան դասը ոչ եթէ կը խախտէ և կը կործանէ զհաւատս, այլ կը հաստատէ և կը պտղաբերէ . . . Քահանայն յեկեղեցւոյն և վարժապետն՝ ի դասու մի և նոյն պաշտօնն ունին . մին ցուցանելով մանկան զերկինս և զյաւիտենականութիւնն, միւսն զերկիր, զանցեալն նորին և զներկայն։ Երկու զուգագիծ ճամբէ կ'երթան որոց երկուքին ալ վախճանն մի է »։

Ճառս բազում ծափահարութեամբ ընդունելի եղաւ, յետ որոյ վսեմափայլ Դեսպանն հետևեալ կարճառօտ ատենաբանութեամբ պատասխան տուաւ.

### Տէր Մեծառոր և Տեարք.

Շատ մեծ հաճութիւն կ'իմանամ՝ աս հանդիսիս նախադահ ըլլալուս, և իմ բոլորս իմ հայրենակիցներս ժողոված տեսնելուս վրայ։ Նոյնչափ մեծ է նաև իմ գոհութիւնս հաստատապէս տեսնելով այն յառաջադիմութիւնն որ ըրեր են այս սիրելի աշակերտները իրենց ուսմանց մէջ, ճարտար և իմաստուն առաջնորդութեամբ Մեծաւորին և վարժապետաց վարժարանիս, որոնք չեն դադրիր անոնց ամէն խնամքն և հոգը ցուցընելու։

Ուրեմն, սիրելի աշակերտք, օգտակար կերպով բանեցուցէք ձեր բնակութիւնը այս լուսաւորեալ երկրին մէջ, որ միշտ փութացեր է իր լուսաւորութիւնը մատուցանելու ջաճկաստանի զաւակացը. որպէս զի ձեր ուսմունքները կատարելագործէք և մեր հայրենեացը օգտակար ըլլաք։ Աս կերպով կրնաք արժանապէս պատասխանել մեր Օգոստափառ և սիրելի Սուլդանին ակնկալութեանցը, որուն սիրալիր և հայրական խնամքը ամէնքնիս ալ յայտնի ապացոյցներով տեսած ենք, որ ունի անխորաբար իր ամէն հպատակացը վրայ։

Հոս տեղս ուրիշ պարտք մ' ալ ունինք ցուցընելու մեր երախտագիտութիւնը մեր թագաւորին վեհափառ և վեհանձն դաշնակցին Օգոստափառ կայսեր այն շնորհալից հիւրասիրութեանը և ամէն տեսակ դիւրութեանց որ միշտ կը վայելենք իր Տէրութեանը կողմանէ։

Շնորհակալ եմ վարժարանիս Տէր Մեծաւորին այն ամէն մարդասիրական գովութեան խօսքերուն՝ որ ուզեց զրուցել իմ վրայօք։

Ի վերջ բանիցս աշակերտաց վիճակներն կարդացուեցան, և իւրաքանչիւրն իրենց պսակն ընդունեցան նախադահին ձեռքէն, խրախուսեակք զինուորական երաժշտութեամբք, որք իւրաքանչիւր մեծ մրցանակաց մէյմէկ նուագ կը զարնէին։

Հանդիսէն վերջը բոլոր հրաւիրեակք ուրիշ դահլիճ մը փոխադրուեցան, ուր շարուած էին գեղարուեստից աշխատութիւնքն, զորս մասնաւոր մտադրութեամբ քննելէն վերջը, շատ գոհութիւն ցուցընելով մեկնեցան։